




Social Security

Ծերության նպաստներ

www.socialsecurity.gov

Բովանդակություն

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատել	3
Սոցիալական Ապահովությունը և Ձեր կենսաթոշակային ծրագիրը`	4
Ձեր կենսաթոշակային նպաստները`	4
Ընտանեկան նպաստներ`	10
Ի՞նչ պետք է իմանաք կենսաթոշակային նպաստի հրավասու լինելու դեպքում`	15
Խոսք Medicare-ի մասին`	21



Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատել

Այցելե՛ք մեր կայքէջը`

Մեր` www.socialsecurity.gov կայքում Դուք կարող եք`

- Ստեղծել *my* Social Security անձնական էջը` Ձեր *Social Security Statement* (Սոցիալական Ապահովության Հաշվետվությունը) դիտարկելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստ ների հավաստագրության նամակը տպելու, Ձեր անմիջական ավանդադրման վերաբերյալ տեղեկատվությունը փոփոխելու, Medicare քարտի փոխարինում հայցելու, 1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Օժանդակ օգնության (Extra Help) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրվող դեղորայքի ծրագրի ծախսերի համար);
- Դիմել ծերության (կենսաթոշակային), հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար;
- Ստանալ Ձեր Սոցիալական Ապահովության տարածքային Գրասենյակի հասցեն ;
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները ; և
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին:

Այս ծառայություններից մի քանիսը հասանելի են միայն անգլերեն լեզվով:

Ձանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով

Բացի մեր կայքէջից օգտվելուց, կարող եք մեզ անվճար զանգահարել **1-800-772-1213** հեռախոսահամարով: Եթե խոսում եք իսպաներեն, սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար, սեղմեք 1, սպասեք զծի վրա և Անգլերեն լեզվով մեքենայացված ձայնով հուշումների ժամանակ մնացեք լուռ մինչև մի ներկայացուցիչ պատասխանի: Ներկայացուցիչն կկապվի մի թարգմանչի հետ, ձեր հեռաձայնային խոսակցությանը օգնելու համար: Թարգմանչական սպասարկությունները տրամադրելի են անվճար: Մենք կարող ենք պատասխանել մասնավոր հարցերի առավոտյան ժամի 7-ից մինչև երեկոյան ժամի 7-ը, երկուշաբթի-ուրբաթ: Ընդհանրապես եթե զանգահարեք շաբաթվա մեջ երեքշաբթի-ին հաջորդող օրերին, սպասելու ժամանակն ավելի կարճ կլինի: Մենք կարող ենք տեղեկությունները տրամադրել մեքենայացված հեռախոսային ծառայություն, օրական 24 ժամ Անգլերեն լեզվով: Եթե դուք խուլ եք կամ տկար լսողություն ունեք, ապա կարող եք զանգահարել մեր TTY համարով` **1-800-325-0778**:

Ուզում ենք նաև վստահ լինել, որ ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության մի երկրորդ ներկայացուցիչ հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Սոցիալական Ապահովությունը և Ձեր կենսաթոշակային ծրագիրը`

Սոցիալական Ապահովությունը հանդիսանում է գրեթե յուրաքանչյուր ամերիկյան աշխատողի կենսաթոշակային ծրագրի մասը: Եթե Դուք պատկանում եք Սոցիալական Ապահովության ծածկույթում ներառված 96 տոկոս աշխատողների թվին, ապա Դուք պետք է իմանաք, թե ինչպե՞ս է աշխատում համակարգը: Դուք նաև պետք է իմանաք, թե որքան եք ստանալու Սոցիալական Ապահովությունից` կենսաթոշակի անցնելիս: Այս տեղեկագրում բացատրվում է`

- Թե ինչպե՞ս եք Դուք դառնում Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալու իրավասու;
- Թե ինչպե՞ս կարող եմ Ձեր հասույթը և տարիքը անդրադառնալ Ձեր նպաստների վրա;
- Թե ի՞նչ պետք է հաշվի առնեք կենսաթոշակի անցնելու ժամանակամիջոցը որոշելու համար;
- Թե ինչու՞ չպետք է Ձեր հույսը միայն Սոցիալական Ապահովության վրա դնեք Ձեր ողջ կենսաթոշակային եկամտի մասով:

Սոցիալական Ապահովության կենսաթոշակային նպաստների վերաբերյալ այս հիմնական տեղեկատվությունը չի ենթադրում բոլոր հարցերի պատասխանները: Ձեր դեպքի վերաբերյալ հատկանշկան տեղեկատվություն ստանալու համար` խոսեք Սոցիալական Ապահովության ներկայացուցչի հետ:

Ձեր կենսաթոշակային նպաստները`

Ինչպե՞ս եք Դուք դառնում կենսաթոշակային նպաստների իրավասու`

Երբ Դուք աշխատում եք և վճարում եք Սոցիալական Ապահովության հարկեր` Դուք վաստակում եք “միավորներ” (credits) Սոցիալական Ապահովության նպաստների հաշվով:

Կենսաթոշակային նպաստներ ստանալու համար անհրաժեշտ միավորների քանակը կախված է Ձեր ծննդյան տարեթվից: Եթե Դուք ծնվել եք 1929 թվականին կամ ավելի ուշ, ապա Ձեզ անհրաժեշտ է 40 միավոր (credit) (10 տարվա աշխատանքային փորձ):

Եթե Դուք դադարում եք աշխատել՝ նախքան նպաստներ ստանալու իրավասություն ունենալու համար բավականաչափ միավորներ հավաքելը, ապա այդ միավորները կմնան Ձեր Սոցիալական Ապահովության հաշվառման ներքո: Եթե հետագայում աշխատանքի վերադառնաք, ապա Դուք կարող եք լրացուցիչ միավորներ (credits) ավելացնել՝ իրավասություն ձեռք բերելու համար: Մենք չենք կարող վճարել որևէ կենսաթոշակային նպաստ՝ մինչև Դուք չվաստակեք միավորների պահանջված քանակը:

Որքա՞ն կկազմի Ձեր կենսաթոշակային նպաստը՝

Ձեր նպաստի վճարումը հիմնված է Ձեր աշխատանքային ողջ ընթացքում վաստակած հասույթի վրա: Ողջ կյանքի ընթացքում ավելի բարձր հասույթ ունենալու արդյունքում Դուք կունենաք ավելի բարձր նպաստներ: Եթե եղել եմ որոշ տարիներ, որոնց ընթացքում Դուք չեք աշխատել կամ ունեցել եք ցածր հասույթ, ապա Ձեր նպաստի գումարը կարող է ավելի քիչ լինել, քան եթե Դուք կայուն կերպով աշխատած լինեիք:

Ձեր տարիքը, երբ Դուք որոշում եք կայացնում կենսաթոշակի անցնել, նույնպես անդրադառնում է Ձեր նպաստների վրա: Եթե Դուք կենսաթոշակի անցնեք 62 տարեկանում՝ Սոցիալական Ապահովության հնարավորինս ամենավաղ կենսաթոշակային տարիքը, ապա Ձեր նպաստը կլինի ավելի ցածր, քան եթե Դուք հապաղեք կենսաթոշակի անցնելու հարցում: Այդ քաղաքականության ավելի մանրամասն նկարագրությունը Դուք կարող եք գտնել 7-ից 9-ը էջերում:

my Social Security Առցանց անձնական հաշիվը

Այժմ կարող եք հեշտությամբ կարգավորել *my* Social Security անվտանգ առցանց անձնական հաշիվը: Դա թույլ է տալիս Ձեզ մուտք ունենալ Ձեր Սոցիալական Ապահովության Հաշվետվությանը (Social Security Statement)՝ Ձեր

հասույթը ստուգելու և նպաստների նախահաշվարկը ստանալու համար: Դուք կարող եք նաև օգտագործել Ձեր **my Social Security** առցանց անձնական հաշիվը՝ Սոցիալական Ապահովության համարով քարտի փոխարինման հայց ներկայացնելու համար (հասանելի է որոշ նահանգներում և Կոլումբիայի Շրջանում): Եթե Դուք նպաստներ եք ստանում, Դուք կարող եք նաև՝

- Ստանալ Ձեր նպաստի հավաստագրման նամակը;
- Փոխել Ձեր հասցեն և հեռախոսահամարը;
- Խնդրել Medicare-ի քարտի փոխարինում;
- Խնդրել SSA-1099 կամ SSA-1042S փոխարինում հարկային ժամանակաշրջանի համար; կամ
- Մեկնարկել կամ փոխել Ձեր ուղղակի փոխանցումը (direct deposit):

Դուք կարող եք **my Social Security** անձնական հաշիվ ստեղծել, եթե Դուք 18 տարեկան եք կամ ավելի բարձր, ունեք Սոցիալական Ապահովության համար, գործող էլ. փոստի հասցե և ԱՄՆ փոստային հասցե: Անձնական հաշիվը ստեղծելու համար այցելեք **www.socialsecurity.gov/myaccount** կայքէջը: Անհրաժեշտ կլինի, որպեսզի որոշ անձնական տեղեկատվություն տրամադրեք՝ Ձեր ինքնությունը հավաստելու համար, և այնուհետև Ձեզանից կխնդրվի օգտագործողի անուն և գաղտնաբառ ընտրել:

Ստացե՛ք կենսաթոշակային նպաստի անհատական նախահաշվարկը՝

Դուք կարող եք օգտվել մեր առցանց Կենսաթոշակային Հաշվիչից (Retirement Estimator)՝ անհատականացված կենսաթոշակային նպաստի նախահաշվարկը անմիջապես ստանալու համար, ինչը կօգնի Ձեզ ծրագրել Ձեր կենսաթոշակը: Առցանց Կենսաթոշակային Հաշվիչը (Retirement Estimator) դա հարմար և հուսալի ֆինանսական պլանավորման գործիք է, որի շնորհիվ Դուք ստիպված չեք լինի ձեռքով մուտքագրել եկամուտների մասին տարիների տվյալները: Ինչպես նաև, հաշվիչը Ձեզ թույլ կտա ստեղծելու Ձեր “ինչ կլինի եթե” սցենարները: Օրինակ, Դուք կարող եք փոխել Ձեր “աշխատանքի դադարեցման” ամսաթիվը

կամ ակնկալվող ապագա հասույթի չափսը՝ կենսաթոշակի անցնելու բազմակի տարբերակներ ստեղծելու և համեմատելու նպատակով:

Լրացուցիչ տեղեկատվությանը ծանոթացե՛ք Առցանց Կենսաթոշակային Հաշվիչ (Online Retirement Estimator) տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10510) (Publication No. 05-10510) կամ այցելեք մեր կայքը՝ www.socialsecurity.gov/estimator հասցեով:

Կենսաթոշակի լրիվ տարիք՝

Եթե Դուք ծնվել եք 1944թ-ին կամ ավելի վաղ, ապա Դուք արդեն իրավասու եք Սոցիալական Ապահովության լիարժեք նպաստներ ստանալու համար: Եթե Դուք ծնվել եք 1943թ-ից մինչև 1960թ-ը ընկած ժամանակահատվածում, ապա կենսաթոշակային լիարժեք նպաստների վճարման եկթակա տարիքն աստիճանաբար աճում է մինչև 67 տարեկանը: Հետևյալ աղյուսակում ներկայացված է կենսաթոշակի անցնելու լրիվ տարիքը՝ ըստ ծննդյան տարեթվերի:

Սոցիալական Ապահովության Լիարժեք նպաստ ստանալու տարիք	
Ծննդյան տարեթիվ	Կենսաթոշակի լրիվ տարիք
1943-1954	66
1955	66 և 2 ամիս
1956	66 և 4 ամիս
1957	66 և 6 ամիս
1958	66 և 8 ամիս
1959	66 և 10 ամիս
1960 և ավելի ուշ	67
ՆՇՈՒՄ՝ Յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին ծնված անձինք պետք է հղվեն նախորդ տարվանից:	

ՆՇՈՒՄ` Թեև կենսաթոշակի անցնելու լրիվ տարիքն այլևս 65-ը չէ, Դուք պետք է գրանցվեք Medicare-ի համար Ձեր 65-րդ տարին լրանալուց երեք ամիս առաջ: Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս էջ 21:

Վաղ կենսաթոշակառություն`

Դուք կարող եք Սոցիալական Ապահովության կենսաթոշակային նպաստներ ստանալ 62 տարեկանից սկսած: Այնուամենայնիվ, մենք կկրճատենք Ձեր նպաստը եթե կենսաթոշակի անցնեք` մինչև Ձեր կենսաթոշակի լրիվ տարիքը լրանալը: Օրինակ` 62 տարեկանում Ձեր նպաստը կկվազի մոտ 25 տոկոսով, ի տարբերություն կենսաթոշակի լրիվ տարիքը լրանալու դեպքում վճարման ենթակա նպաստին:

Որոշ անձինք դադարում են աշխատելը մինչև 62 տարեկանը: Սակայն այդ դեպքում, հասույթ չունենալու տարիները կհանգեցնեն Սոցիալական Ապահովության ավելի ցածր նպաստի` կենսաթոշակի անցնելու ժամանակ:

ՆՇՈՒՄ` Երբեմն առողջական խնդիրները ստիպում են, որպեսզի մարդիկ ավելի շուտ անցնեն կենսաթոշակի: Եթե չեք կարողանում աշխատել առողջական խնդիրների հետևանքով, ապա դիտարկեք Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստներին դիմելու հարցը: Հաշմանդամության նպաստի գումարը նույնն է, ինչ կենսաթոշակային նպաստի լիարժեք չնվազեցված գումարը: Եթե Դուք ստանում եք Սոցիալական Ապահովության հաշմանդամության նպաստ կենսաթոշակի լրիվ տարիքին հասնելիս` մենք փոխակերպում ենք այդ նպաստները կենսաթոշակային նպաստի: Լրացուցիչ տեղեկատվությանը ծանոթացե՛ք Հաշմանդամության նպաստներ (Disability Benefits) տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10029-AM) (Publication No. 05-10029):

Հետաձգված կենսաթոշակառություն`

Դուք կարող եք ընտրել աշխատելը շարունակելու տարբերակը անգամ կենսաթոշակի լրիվ տարիքին հասնելուց հետո: Այդ դեպքում, Դուք կարող եք ավելացնել Ձեր ապագա Սոցիալական Ապահովության նպաստները երկու եղանակով:

Ձեր աշխատած յուրաքանչյուր հավելյալ տարին Ձեր Սոցիալական Ապահովության հաշվառմանը ավելացնում է ևս մեկ հասույթի տարի: Կյանքի ողջ ընթացքում վաստակած ավելի բարձր հասույթը կարող է ավելի բարձր նպաստներ ենթադրել՝ կենսաթոշակի անցնելիս:

Ինչպես նաև, Ձեր նպաստը ինքնաբերաբար կավելանա որոշակի տոկոսով Ձեր կենսաթոշակի լրիվ տարիքը լրանալու պահից մինչև այն պահը, երբ կսկսեք ստանալ Ձեր նպաստները, կամ մինչև կդառնաք 70 տարեկան: Տոկոսադրույքը տարբեր է՝ կախված Ձեր ծննդյան տարեթվից: Օրինակ՝ եթե Դուք ծնվել եք 1943թ-ին կամ ավելի ուշ, մենք Ձեր նպաստին կհավելենք տարեկան 8 տոկոս՝ Ձեր կենսաթոշակի լրիվ տարիքը լրանալուց հետո Սոցիալական Ապահովությունն դիմելու յուրաքանչյուր հետաձգված տարվա համար:

ՆՇՈՒՄ՝ Եթե որոշում եք հետաձգել Ձեր կենսաթոշակը, ապա վստահ եղեք, որ կգրանցվեք Medicare -ի համար 65 տարեկանում: Որոշ հանգամանքներում, բժշկական ապահովագրությունը արժե ավելին, եթե դրան դիմելը հետաձգվում է: Medicare-ի վերաբերյալ այլ տեղեկատվություն կարող եք գտնել 21-րդ էջերում:

Կենսաթոշակի անցնելու ժամկետի որոշում

Կենսաթոշակի անցնելու ժամկետի ընտրությունը շատ կարևոր և անձնական որոշում է: Անկախ Ձեր կենսաթոշակի անցնելու տարիքից, նախապես կապ հաստատեք Սոցիալական Ապահովության հետ՝ հնարավոր տարբերակներին ծանոթանալու և լավագույն որոշումը կայացնելու համար: Երբեմն, կենսաթոշակի անցնելու ամսվա ընտրությունը կարող է ավելի բարձր նպաստի վճարումներ ենթադրել Ձեր և Ձեր ընտանիքի անդամների համար:

Կենսաթոշակի անցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս՝ հիշեք, որ ֆինանսական խորհուրդատուների կարծիքով, ապահով կենսաթոշակ ունենալու համար Ձեզ անհրաժեշտ է Ձեր նախքան կենսաթոշակի անցնելը ստացած եկամտի 70-80 տոկոսը: Քանի որ Սոցիալական Ապահովությունը փոխարինում է Ձեր նախակենսաթոշակային եկամտի միայն

մոտ 40 տոկոսը միջին կարգի աշխատողի համար, ուստի թռչակներ, խնայողություններ և ներդրումներ ունենալը կարևոր է:

Դիմե՛ք նպաստների համար՝ դրանք մեկնարկելու Ձեր նախընտրած ամսաթվից մոտ երեք ամիս առաջ: Եթե Դուք պաստրաստ չեք կենսաթոշակի անցնելուն, սակայն մտածում եք մոտ ապագայում դա անելու մասին, ապա այցելե՛ք Սոցիալական Ապահովության կայքը՝ www.socialsecurity.gov/retire հասցեով՝ մեր հարմարավետ և տեղեկատվական Կենսաթոշակի ծրագրման գործիքից օգտվելու համար:

Կենսաթոշակային նպաստներ այրիների համար՝

Այրիները կարող են սկսել Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալ 60 տարեկանում, կամ 50 տարեկանում՝ հաշմանդամ լինելու դեպքում: Այրիները կարող են սկսել նվազեցված նպաստներ ստանալ մեկ հաշվառման ներքո, այնուհետև, հետագայում անցնել լիարժեք նպաստներին մեկ այլ հաշվառման ներքո: Օրինակ՝ կինը կարող է ստանալ այրու նվազեցված նպաստ 60 կամ 62 տարեկանում, և այնուհետև անցնել իր լիարժեք (100 տոկոս) կենսաթոշակային նպաստին՝ կենսաթոշակի լրիվ տարիքին հասնելիս: Անհրաժեշտ կլինի, որպեսզի խոսեք Սոցիալական Ապահովության հետ՝ Ձեզ համար հնարավոր տարբերակների մասին, քանի որ կանոնները կարող են տարբեր լինել՝ կախված Ձեր հայրից:

Ընտանեկան նպաստներ՝

Նպաստներ ընտանիքի անդամների համար՝

Եթե Դուք ստանում եք Սոցիալական Ապահովության կենսաթոշակային նպաստներ, ապա Ձեր ընտանիքի որոշ անդամներ նույնպես կարող են նպաստներ ստանալ, ներառյալ՝

- Ձեր ամուսինը (կողակիցը), եթե նա 62 տարեկան է կամ ավելի բարձր;
- Ձեր ամուսինը (կողակիցը) մինչև 62 տարեկան, եթե նա խնամում է Ձեր հաշվառման ներքո գրանցված երեխային, որը 16 տարեկանից ցածր է կամ հաշմանդամ;

- Ձեր նախկին ամուսինը (կողակիցը), եթե նա 62 տարեկան է կամ ավելի բարձր (տե՛ս “Ամուսնալուծված ամուսինների նպաստներ” (“Benefits for a divorced spouse” էջ 11);
- Մինչև 18 կամ 19 տարեկան երեխան, եթե նա ցերեկային ուսուցման ուսանող է և դեռևս չի ավարտել ավագ դպրոցը; և
- Հաշմանդամ երեխաները՝ անգամ 18 տարեկան և ավելի բարձր լինելու դեպքում:

Եթե Դուք դառնում եք երեխայի ծնող (այդ թվում որդեգրած երեխայի) նպաստներ ստանալուց հետո, ապա տեղեկացրեք մեզ այդ երեխայի մասին: Այնուհետև մենք կորոշենք, թե արդյո՞ք երեխան նպաստների իրավասու է, թե ոչ:

ԼՇՈՒՄ՝ Երեխաների նպաստները հասանելի են միայն ոչ ամուսնացած երեխաներին: Երբեմն, մենք կարող ենք նպաստներ վճարել հաշմանդամ երեխային, որն ամուսնացել է մի անձի հետ, որը նույնպես մանկությունից հաշմանդամ է:

Ամուսինների նպաստներ՝

Ամուսինը (կողակիցը), որն երբեք չի աշխատել կամ ունի ցածր եկամուտ, կարող է կենսաթոշակի անցած աշխատողի լրիվ նպաստի կեսի չափով նպաստ ստանալ: Եթե Դուք իրավասու եք ինչպես Ձեր սեփական կենսաթոշակային նպաստներին, այնպես էլ ամուսինների նպաստներին, ապա մենք միշտ առաջին հերթին վճարում ենք Ձեր սեփական նպաստները: Եթե Ձեզ վճարման ենթակա ամուսինների նպաստը ավելի բարձր է, քան Ձեր սեփական կենսաթոշակային նպաստը, ապա Դուք կստանաք՝ ավելի բարձր նպաստին հավասարագոր նպաստների համադրություն:

Օրինակ`

Մարի Անը իրավասու է ստանալու \$250 կազմող կենսաթոշակային նպաստ և \$400 կազմող ամուսինների նպաստ: Իր կենսաթոշակի լրիվ տարիքին հասնելիս, նա կստանա իր սեփական \$250 կազմող կենսաթոշակային նպաստը: Ինչպես նաև, մենք կհավելենք \$150 իր ամուսնու (կողակցի) նպաստից, որպեսզի ընդհանուր գումարը կազմի \$400: Եթե նա իր կենսաթոշակային նպաստը ստանա մինչև կենսաթոշակի լրիվ տարիքին հասնելը, ապա մենք կնվազեցնենք 2 նպաստների գումարը:

Եթե Դուք առնվազն հասել եք Ձեր կենսաթոշակի լրիվ տարիքին և իրավասու եք ինչպես Ձեր սեփական կենսաթոշակային նպաստին, այնպես էլ Ձեր ամուսինների (կամ ամուսնալուծված ամուսնու) նպաստին, ապա Դուք կարող եք ընտրել Ձեր դիմումը սահմանափակելու տարբերակը, և դիմել նպաստներից մեկին, և հետաձգել մյուսին դիմելու ժամանակահատվածը՝ ավելի ուշ շրջանի:

2015թ.-ին ընդունված օրենքի համաձայն 1954թ.-ի հունվարի 2-ին կամ դրանից հետո ծնված անձինք այլև չունեն այդ տարբերակից օգտվելու հնարավորությունը: Եթե նրանք հանդիսանում են ինչպես իրենց սեփական, այնպես էլ իրենց ամուսնու (այդ թվում ամուսնալուծված ամուսնու) նպաստների իրավասու, ապա նրանք պետք է դիմեն երկու նպաստների համար: Դա կոչվում է «հայցի ենթադրվող ներկայացում» (“deemed filing”): Եթե Դուք հայց եք ներկայացնում մեկ նպաստի համար, ապա Դուք «ենթադրաբար» պետք է հայց ներկայացնեք մյուս նպաստի համար ևս, անգամ եթե Դուք չեք դառնում դրա իրավասուն մինչև ավելի ուշ ժամանակահատվածը:

Եթե Դուք ստանում եք կենսաթոշակ այնպիսի աշխատանքի հիման վրա, որի հասույթից Սոցիալական Ապահովության հարկեր չեք վճարել, ապա մենք կարող ենք կրճատել Ձեր ամուսնու (կողակցի) նպաստը: Սոցիալական Ապահովության շրջանակում չընդգրկված աշխատանքից կենսաթոշակ ստանալու վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ 15-16 էջերում:

Եթե ամուսինները ստանում են Սոցիալական Ապահովության կենսաթոշակային նպաստ՝ նախքան կենսաթոշակի լրիվ տարիքին հասնելը, ապա մենք կրճատում ենք նպաստի գումարը: Գումարի կրճատման չափը կախված է անձի կենսաթոշակի լրիվ տարիքի լրանալու ժամկետից:

Օրինակ՝

- Եթե կենսաթոշակի լրիվ տարիքը 65 տարեկանն է, ապա 62 տարեկանում ամուսինը (կողակցիցը) կարող է ստանալ աշխատողի չկրճատված նպաստի 37.5 տոկոսը:
- Եթե կենսաթոշակի լրիվ տարիքը 66 տարեկանն է, ապա 62 տարեկանում ամուսինը (կողակցիցը) կարող է ստանալ աշխատողի չկրճատված նպաստի 35 տոկոսը:

- Եթե կենսաթոշակի լրիվ տարիքը 67 տարեկանն է, ապա 62 տարեկանում ամուսինը (կողակիցը) կարող է ստանալ աշխատողի չկրճատված նպաստի 32.5 տոկոսը:

Նպաստը աճում է ըստ տարիքի՝ հասնելով մինչև առավելագույնը 50 տոկոսը՝ կենսաթոշակի լրիվ տարիքին հասնելիս: Եթե կենսաթոշակի լրիվ տարիքը այլ է քան վերը նշվածները, ապա 62 տարեկանում նպաստի գումարը կտատանվի 32.5 տոկոսից մինչև 37.5 տոկոսը:

Ձեր ամուսինը (կողակիցը) կարող է ստանալ լիարժեք նպաստ՝ անկախ իր տարիքից, եթե ինսամում է Ձեր հաշվառման ներքո նպաստի իրավասու երեխայի: Երեխան պետք է լինի մինչև 16 տարեկան կամ հաշմանդամ (մինչև 22 տարեկան):

ՆՇՈՒՄ՝ Ձեր ներկայիս ամուսինը (կողակիցը) չի կարող ամուսինների նպաստ ստանալ, մինչև **Դուք չներկայացնեք կենսաթոշակային նպաստ ստանալու դիմումը:**

Երեխաների նպաստներ՝

Ձեր ինսամակալության տակ գտնվող երեխան կարող է Ձեր հասույթի հաշվառման ներքո նպաստներ ստանալ՝ երբ մեկնարկի Ձեր Սոցիալական Ապահովության կենսաթոշակային նպաստը: Նա կարող է ստանալ մինչև Ձեր կենսաթոշակի լրիվ նպաստի կեսով չափ նպաստ: Իրավասու լինելու համար, նա պետք է լինի Ձեր կենսաբանական երեխան, որդեգրված երեխան, կամ Ձեր ինսամակալության տակ գտնվող խորոջ երեխան: (Որոշ դեպքերում, Ձեր երեխան կարող է նաև իր տատիկի/պապիկի հասույթի հիման վրա նպաստ ստանալու իրավասություն ունենալ):

Նպաստներ ստանալու համար Ձեր երեխան պետք է լինի՝

- Չամուսնացած;
- 18 տարեկանից ցածր;
- 18-ից 19 տարեկան և ցերեկային ուսուցման ուսանող (12-րդ դասարանից ոչ բարձր); կամ
- 18 տարեկան կամ ավելի բարձր, և մինչև 22 տարեկանը դարձած հաշմանդամ:

ՆՇՈՒՄ` Հաշմանդամ երեխաները, որոնց ծնողները ունեն սահմանափակ եկամուտ կամ միջոցներ, կարող են Հավելյալ Ապահովության Եկամտի (SSI) նպաստ ստանալու իրավասություն ունենալ: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելե՛ք մեր կայքը կամ գանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով:

Ընտանեկան առավելագույն նպաստներ`

Եթե Դուք ունեք Սոցիալական Ապահովության իրավասու երեխաներ, ապա յուրաքանչյուրը կստանա մինչև Ձեր լրիվ նպաստի կեսով չափ նպաստ: Սակայն, գոյություն ունի Ձեզ և Ձեր ընտանիքին մեր կողմից վճարման ենթակա գումարի սահմանաչափ: Այդ սահմանաչափը կազմում է Ձեր սեփական նպաստի գումարի 150-ից 180 տոկոսը: Եթե Ձեր ամուսնուն (կողակցին) և երեխաներին վճարման ենթակա նպաստների ընդհանուր գումարը գերազանցում է նշված սահմանաչափը, ապա մենք կկրճատենք նրանց նպաստները: Ձեր նպաստի գումարը փոփոխության չի ենթարկվի:

Ամուսնալուծված ամուսինների նպաստներ`

Ձեր ամուսնալուծված ամուսինը (կողակիցը) կարող է նպաստներ ստանալ Ձեր Սոցիալական Ապահովության հաշվառման ներքո, եթե Ձեր ամուսնությունը տևել է առնվազն 10 տարի: Ձեր ամուսնալուծված ամուսինը (կողակիցը) պետք է լինի 62 տարեկան, կամ ավելի բարձր և ամուսնացած չլինի:

Իր կողմից ստացվող նպաստները չեն անդրադառնում Ձեզ կամ Ձեր ներկայիս ամուսնուն (կողակցին) վճարման ենթակա նպաստների գումարի վրա:

Ձեր նախկին ամուսինը (կողակիցը) կարող է նպաստներ ստանալ, անգամ եթե Դուք դեռ կենսաթոշակի չեք անցել: Դուք երկուսով պետք է լինեք առնվազն 62 տարեկան, և ամուսնալուծված լինեք առնվազն 2 տարի առաջ:

Ի՞նչ պետք է իմանաք կենսաթոշակային նպաստի իրավասու լինելու դեպքում՝

Ինչպե՞ս եք գրանցվում Սոցիալական Ապահովության համար՝

Կենսաթոշակային նպաստի համար Դուք կարող եք դիմել առցանց՝ մեր www.socialsecurity.gov կայքում, կամ՝ զանգահարելով մեր անվճար **1-800-772-1213** (TTY **1-800-325-0778**) հեռախոսահամարներով: Ինչպես նաև, Դուք կարող եք այցելության գրանցվել Սոցիալական Ապահովության ցանկացած գրասենյակում՝ դիմումը անձամբ ներկայացնելու համար:

Ելնելով Ձեր հանգամանքներից՝ Ձեզ անհրաժեշտ կլինի ներկայացնել ստորև նշված փաստաթղթերից որոշները կամ բոլորը: Մի՛ հետաձգեք նպաստների համար դիմումի ներկայացնելը՝ ամբողջական տեղեկատվությունը չունենալու հետևանքով: Եթե Ձեր տրամադրության տակ չունեք Ձեզ անհրաժեշտ փաստաթղթերը՝ մենք կօգնենք Ձեզ դրանք ձեռք բերելու հարցում:

Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթղթերը ներառում են՝

- Ձեր Սոցիալական Ապահովության համարը;
- Ձեր ծննդյան վկայականը;
- Վերջին տարվա համար Ձեր W-2 ձևաթուղթը, կամ հարկային հայտարարագիրը՝ ինքնաշխատ լինելու դեպքում:
- Ձեր գորացրման փաստաթղթերը, եթե անցել եք գինվորական ծառայություն;
- Ձեր ամուսնու (կողակցի) ծննդյան վկայականն ու Սոցիալական Ապահովության համարը, եթե նա դիմում է նպաստների համար;
- Ձեր երեխաների ծննդյան վկայականներն ու Սոցիալական Ապահովության համարները, եթե Դուք դիմում եք երեխաների նպաստների համար;
- ԱՄՆ քաղաքացիության կամ օրինական օտարերկրացու կարգավիճակի հավաստիքը, եթե Դուք (կամ նպաստների համար դիմող Ձեր ամուսինը (կողակիցը) կամ երեխան) Միացյալ Նահանգներում չեք ծնվել; և

- Ձեր ֆինանսական հաստատության անվանումը, բանկի կոդը (routing number), և Ձեր հաշվեհամարը՝ ուղղակի փոխանցման համար (direct deposit): Եթե Դուք չունեք հաշվեհամար որևէ ֆինանսական հաստատությունում, կամ նախընտրում եք Ձեր նպաստները ստանալ կանխավճարային դեբետային քարտի վրա (prepaid debit card), ապա Դուք կարող եք ձեռք բերել Direct Express® քարտը: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք **www.GoDirect.org** կայքը:

Դուք պետք է ներկայացնեք բնօրինակ փաստաթղթեր, կամ դրանք թողարկող հաստատության հավաստագրված կրկնօրինակները: Դուք կարող եք ուղարկել դրանք փոստով, կամ անձամբ ներկայացնել Սոցիալական Ապահովության գրասենյակ: Մենք կհանենք փաստաթղթերի պատճենները և Ձեզ կվերադարձնենք Ձեր փաստաթղթերը:

Բողոքարկելու իրավունք՝

Եթե Դուք համաձայն չեք Ձեր հայցի կապակցությամբ կայացված որոշման հետ, ապա կարող եք բողոքարկել այն: Ձեր կողմից նախաձեռնվող քայլերի վերաբերյալ կարող եք ծանոթանալ Բողոքարկման Գործընթացը (The Appeals Process) տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10041-AM) (Publication No. 05-10041):

Դուք կարող եք ինքնուրույն վարել Ձեր բողոքարկման վարույթը՝ Սոցիալական Ապահովության կողմից անվճար տրամադրվող աջակցության շնորհիվ, կամ կարող եք դիմել որևէ ներկայացուցչի օգնությանը: Մենք կարող ենք Ձեզ տեղեկատվություն տրամադրել այն կազմակերպությունների վերաբերյալ, որոնք կօգնեն Ձեզ ներկայացուցիչ գտնելու հարցում: Ներկայացուցիչ ընտրելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությանը ծանոթացե՛ք Ներկայացուցիչ Ունենալու Ձեր Իրավունքը (Your Right To Representation) տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10075-AM) (Publication No. 05-10075):

Եթե Դուք աշխատում եք և միաժամանակ նպաստներ եք ստանում՝

Դուք կարող եք շարունակել աշխատել և միաժամանակ ստանալ կենսաթոշակային նպաստներ: Կենսաթոշակային լիարժեք տարիքի հասնելու ամսին (կամ դրանից հետո) Ձեր վաստակած եկամուտը չի նվազեցնի Ձեր Սոցիալական Ապահովության նպաստը: Այնուամենայնիվ, մենք ստիպված կլինենք նվազեցնել Ձեր նպաստները, եթե մինչև կենսաթոշակի լրիվ տարիքի լրանալուն մնացած ամիսներին Ձեր եկամուտը գերազանցի որոշակի սահմանաչափը: (Տե՛ս 7-րդ էջի աղյուսակը՝ կենսաթոշակի լրիվ տարիքը ճշտելու համար):

Ահա թե ինչպես է դա աշխատում՝

Մինչև Ձեր կենսաթոշակի լրիվ տարիքին հասնելը, տարեկան սահմանաչափը գերազանցող Ձեր վաստակած յուրաքանչյուր \$2-ի դիմաց մենք կկրճատենք Ձեր նպաստները \$1-ով:

Ձեր կենսաթոշակի լրիվ տարիքը լրանալու տարում, մենք կկրճատենք Ձեր նպաստները \$1-ով տարեկան սահմանաչափը գերազանցող Ձեր վաստակած յուրաքանչյուր \$3-ի դիմաց: Այդ կրճատումը կշարունակվի մինչև Ձեր կենսաթոշակի լրիվ տարիքը լրանալու ամիսը: Կենսաթոշակի լրիվ տարիքին հասնելիս՝ Դուք կարող եք շարունակել աշխատել և մենք չենք կրճատի Ձեր Սոցիալական Ապահովության նպաստը՝ անկախ Ձեր վաստակած գումարից:

Եթե տարվա ընթացքում Ձեր հասույթը Ձեր նախնական հաշվարկից ավելի բարձր է կամ ավելի ցածր, ապա տեղեկացրեք մեզ այդ մասին որքան հնարավոր է շուտ, որպեսզի մենք կարողանանք ճշգրտել Ձեր նպաստները:

Հատուկ ամսական կանոն՝

Ձեր հասույթի նկատմամբ կիրառվում է հատուկ կանոն մեկ տարվա համար. դա, սովորաբար, կենսաթոշակի անցնելու Ձեր առաջին տարին է: Այդ կանոնի համաձայն՝ Դուք կարող եք ստանալ Սոցիալական Ապահովության լիարժեք վճարագիր որոշակի սահմանաչափում վաստակած յուրաքանչյուր ամսվա համար՝ անկախ Ձեր տարեկան հասույթից:

Եթե Դուք ցանկանում եք ստանալ լրացուցիչ տեղեկատվություն, թե ինչպե՞ս է հասույթը անդրադառնում կենսաթոշակային նպաստի վրա, ապա ծանոթացե՛ք Ինչպե՞ս է Աշխատանքը Անդրադառնում Ձեր Նպաստների վրա (How Work Affects Your Benefits) տեղեկագրին (Հրատարակություն թիվ 05-10069-AM) (Publication No. 05-10069): Տվյալ տեղեկագրում ներկայացված է տարեկան և ամսական հասույթի գործող սահմանաչափերի ցանկը:

Ձեր նպաստները կարող են հարկվել՝

Սոցիալական Ապահովություն ստացող անձանց մոտ 40 տոկոսը պետք է եկամտահարկ վճարի իր նպաստներից: Օրինակ՝

- Եթե Դուք դաշնային եկամտահարկի հայտարարագիր եք ներկայացնում որպես «ֆիզիկական անձ», և Ձեր միասնական եկամուտը* կազմում է \$25,000 -ից \$34,000, Դուք, հավանաբար, ստիպված կլինեք հարկ վճարել՝ Ձեր Սոցիալական Ապահովության նպաստի մինչև 50 տոկոսի մասով: Եթե Ձեր միասնական եկամուտը* գերազանցում է \$34,000, ապա եկամտահարկ կգանձվի Ձեր Սոցիալական Ապահովության նպաստի 85 տոկոսի մասով:
- Եթե Դուք ներկայացնում եք համատեղ հայտարարագիր, ապա հնարավոր է, որ պետք է հարկեր վճարեք Ձեր նպաստների 50 տոկոսի մասով, եթե Դուք և Ձեր ամուսինը (կողակիցը) ունեք միասնական եկամուտ*, որը տատանվում է \$32.000 և \$44.000 սահմաններում: Եթե Ձեր միասնական եկամուտը* գերազանցում է \$44.000-ը, ապա Ձեր Սոցիալական Ապահովության նպաստների մինչև 85 տոկոսը ենթակա է եկամտահարկի գանձման:
- Եթե Դուք ամուսնացած եք և ներկայացնում եք առանձին հայտարարագիր, ապա Դուք հավանաբար հարկեր եք վճարելու Ձեր նպաստներից:

Յուրաքանչյուր տարվա ավարտին՝ մենք Ձեզ փոստով կուղարկենք Սոցիալական Ապահովության նպաստների Հաշվետվությունը (*Social Security Benefit Statement*) (Ձևաթուղթ SSA-1099), որտեղ կարտացույցվեն Ձեր կողմից ստացված նպաստների գումարները: Դուք կարող եք օգտվել

այդ հաշվետվությունից՝ Ձեր դաշնային եկամտահարկի հայտարարագիրը լրացնելիս, որպեսզի պարզեք, թե արդյո՞ք Դուք պետք է հարկեր վճարեք Ձեր նպաստներից:

Թեև Ձեզանից չի պահանջվում, որպեսզի Սոցիալական Ապահովությունը պահումներ կատարի դաշնային հարկերից, հնարավոր է Ձեզ համար դա ավելի հեշտ միջոց լինի, քան եռամսյակի համար հաշվարկված հարկային վճարումների կատարումը:

Լրացուցիչ տեղեկատվության համար գանգահարեք Հարկային ծառայության (Internal Revenue Service) **1-800-829-3676** անվճար հեռախոսահամարով և խնդրեք Հարկային Ուղեցույց Տարեցների համար (*Tax Guide for Seniors*) թիվ 554 Հրապարակումը և Սոցիալական Ապահովություն և Երկաթգծի Աշխատողների Հավասարազոր Կենսաթոշակային Նպաստներ (*Social Security And Equivalent Railroad Retirement Benefits*) թիվ 915 Հրապարակումը:

*1040 հարկային հայտարարգրում Ձեր «միասնական եկամուտը» դա Ձեր ճշգրտված համախառն եկամտի, չհարկվող տոկոսի և Ձեր Սոցիալական Ապահովության նպաստների կեսով չափի հանրագումարն է:

Կենսաթոշակներ՝ Սոցիալական Ապահովության շրջանակում չընդգրկված աշխատանքի հիմքով՝

Եթե Դուք կենսաթոշակ եք ստանում այնպիսի աշխատանքի հիմքով, որի հասույթից վճարել եք Սոցիալական Ապահովության հարկեր, ապա այդ կենսաթոշակը որևէ կերպ չի անդրադառնա Ձեր Սոցիալական Ապահովության նպաստների վրա: Այնուամենայնիվ, եթե Դուք կենսաթոշակ եք ստանում այնպիսի աշխատանքի հիմքով, որի հասույթից չեք վճարել Սոցիալական Ապահովության հարկեր, օրինակ՝ դաշնային քաղաքացիական ծառայություն, որոշակի նահանգային կամ տեղական կառավարության աշխատանք, կամ աշխատանք արտերկրում, ապա մենք կարող ենք կրճատել Ձեր Սոցիալական Ապահովության նպաստը:

Կառավարության համակարգի այն աշխատողների համար, որոնք կարող են Սոցիալական Ապահովության նպաստների իրավասու լինել իրենց ամուսնու (կողակցի) հասույթի հաշվառման ներքո, լրացուցիչ տեղեկատվությանը

ծանոթացե՛ք Կառավարական Կենսաթոշակի Փոխհատուցում (*Government Pension Offset*) տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10007) (Publication No. 05-10007): Արտերկրում աշխատողների կամ կառավարության համակարգի այն աշխատողների համար, որոնք նույնպես իրավասու են իրենց սեփական Սոցիալական Ապահովության Նպաստներին, ծանոթացե՛ք Նպաստների Մատակարարման Անսպասելի Կրճատում (*Windfall Elimination Provision*) տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10045) (Publication No. 05-10045):

Միացյալ Նահանգներից Մեկնելը՝

Եթե Դուք հանդիսանում եք ԱՄՆ քաղաքացի, ապա Դուք կարող եք ճանապարհորդել կամ ապրել արտասահմանյան շատ երկրներում, ինչը որևէ ազդեցություն չի ունենա Ձեր Սոցիալական Ապահովության Նպաստների վրա: Այնուամենայնիվ, կան որոշ երկրներ, որտեղ մենք չենք կարող ուղարկել Ձեր Սոցիալական Ապահովության վճարները: Այդ երկրներն են՝ Ադրբեջանը, Բելառուսիան, Կուբան, Կրաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Հյուսիսային Կորեան, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ուկրաինան, Ուզբեկստանը և Վիետնամը: Այնուամենայնիվ, մենք կարող ենք բացառություններ անել որոշակի իրավասու Նպաստառուների համար նաև այս երկրներում, բացառելով Կուբան և Հյուսիսային Կորեան: Այդ բացառությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար դիմեք Սոցիալական Ապահովության Ձեր տեղամասային գրասենյակին:

Միացյալ Նահանգների սահմաններից դուրս աշխատելու դեպքում՝ Ձեր կողմից նպաստներ ստանալու հարցը որոշելու համար կիրառվում են տարբեր կանոններ:

Լրացուցիչ տեղեկատվությանը ծանոթացե՛ք Ձեր Վճարումները Միացյալ Նահանգներից Դուրս Գտնվելիս (*Your Payments While You Are Outside The United States*) տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10137) (Publication No. 05-10137):

Խոսք Medicare-ի մասին՝

Medicare-ը դա առողջության ապահովագրության ծրագիր է՝ 65 և ավելի բարձր տարիքի անձանց համար: Հաշմանդամ, ինչպես նաև երիկամային անբավարարություն կամ ամիոտրոֆիկ կողմնային սկլերոզի (amyotrophic lateral sclerosis (Lou Gehrig's հիվանդություն)) ունեցող անձինք կարող են ցանկացած տարիքում Medicare-ի ապահովագրություն ստանալ:

Medicare-ն ունի չորս մաս՝

- Medicare Մաս A՝ Հիվանդանոցային ապահովագրություն (Hospital insurance (Part A)), օգնում է վճարել ստացիոնար հիվանդանոցային խնամքի և որոշ հետզննական ծառայությունների համար:
- Medicare Մաս B՝ Բժշկական ապահովագրություն (Medical insurance (Part B)), օգնում է վճարել բժիշկների ծառայությունների, ամբուլատոր հիվանդանոցային խնամքի և այլ բժշկական ծառայությունների համար:
- Medicare Մաս C՝ Medicare Advantage ծրագրեր (Medicare Advantage plans (Part C)), հասանելի են շատ ոլորտներում: Medicare-ի Մաս A և Մաս B ունեցող անձինք կարող են ընտրել իրենց բոլոր առողջապահական խնամքի ծառայությունները՝ Medicare-ի կողմից հաստատված մասնավոր ապահովագրական ընկերության կոմից ստանալու տարբերակը:
- Medicare Մաս D՝ Դեղատոմսով դուրս գրվող դեղորայքի ծածկույթ (Prescription drug coverage (Part D)), թույլ է տալիս վճարել բժիշկի կողմից նշանակված դեղորայքի համար:

Լրացուցիչ տեղեկատվությանը ծանոթացե՛ք *Medicare* տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10043-AM) (Publication No. 05-10043):

Ե՞րբ ես պետք է դիմեմ Medicare-ի համար՝

Եթե Դուք դեռ չեք ստանում նպաստներ, ապա Ձեր 65-րդ տարեդարձից մոտ երեք ամիս առաջ Դուք պետք է դիմեք Սոցիալական Ապահովությանը՝ Medicare ծրագրում բաժանորդագրվելու համար: Դուք կարող եք բաժանորդագրվել Medicare-ի համար՝ նույնիսկ եթե Դուք մտադիր չեք կենսաթոշակի անցնել 65 տարեկանում:

Եթե Դուք արդեն ստանում եք Սոցիալական Ապահովության նպաստներ կամ երկաթուղու կենսաթոշակային վճարագրեր, ապա Medicare-ի համար իրավասություն ստանալուց մի քանի ամիս առաջ մենք Ձեզ հետ կապ կհաստատենք և անհրաժեշտ տեղեկատվություն կտրամադրենք: Եթե Դուք բնակվում եք 50 նահանգներից որևէ մեկում կամ Վաշինգտոնում ԴիՍի-ում (Կոլումբիա շրջան), Հյուսիսային Մարիանայի կղզիներում, Գուամում, Ամերիկյան Սամոայում, կամ ԱՄՆ Վիրջինյան կղզիներում, ապա մենք ինքնաբերաբար կընդգրկենք Ձեզ Medicare-ի Մաս A և Մաս B ծրագրերում: Այնուամենայնիվ, քանի որ Դուք պետք է ապահովագրավճար (premium) վճարեք Մաս B-ով նախատեսված ծածկույթի համար՝ Դուք հնարավորություն ունեք հրաժարվելու տվյալ տարբերակից:

Մենք ինքնաբերաբար չենք գրանցի Ձեզ Medicare-ի Դեղատոմսով դուրս գրվող դեղորայքի ծածկույթի (Մաս D) համար: Մաս D ծրագրին միանալը կամավոր է, այնպես որ Դուք պետք է ընտրեք տվյալ ծածկույթը: Medicare-ի վերաբերյալ վերջին տեղեկատվության համար այցելե՛ք մեր կայքը կամ գանգահարե՛ք ստորև ներկայացված անվճար հեռախոսահամարներով:

Medicare	Կայք՝ www.Medicare.gov
	Անվճար հեռախոսահամար՝ 1-800-MEDICARE (1-800-633-4227)
	Հեռատիպ (TTY) համար՝ 1-877-486-2048

ՆՇՈՒՄ՝ Եթե Դուք չեք բաժանորդագրվում Մաս B-ում և Մաս D-ում հենց սկզբից դրա համար իրավասություն ստանալու պահին, ապա Դուք ստիպված կլինեք վճարել ուշացած բաժանորդագրության տուգանք՝ այնքան ժամանակ որքան ունեք Մաս B-ի և Մաս D ծածկույթները: Ինչպես նաև, Դուք ստիպված կլինեք սպասել բաժանորդահազրության համար, ինչը կհետաձգի տվյալ ծածկույթի տրամադրումը:

Պուլերտո Ռիկոյի և արտասահմանյան երկրների բնակիչները չեն ստանա Մաս B-ն ինքնաբերաբար: Նրանք պետք է ընտրեն այս նպաստը:

“Extra Help” (Հավելյալ օգնություն) Medicare-ի դեղատոմսային դեղորայքի ծախսերի մասով`

Եթե Դուք ունեք սահմանափակ եկամուտ (ըստ պետության սահմանած աղքատության շեմի) և սահմանափակ միջոցներ, ապա Դուք կարող եք նաև Հավելյալ օգնության (Extra Help) իրավասություն ունենալ Medicare-ի Մաս D-ի շրջանակներում` դեղատոմսային դեղորայքի վճարման մասով: Տվյալ ծրագրում Սոցիալական Ապահովության դերը հետևյալում է`

- Օգնել Ձեզ հասկանալու, թե ինչպես կարող եք իրավասություն ստանալ;
- Օգնել Ձեզ լրացնելու Հավելյալ օգնության (Extra Help) հայտը; և
- Ընթացք տալ Ձեր հայտին:

Եթե Դուք դիմեք Հավելյալ օգնության (Extra Help) ծրագրին, մենք կսկսենք նաև Medicare-ի ինսայդությունների ծրագրերի (Medicare Savings Programs) համար դիմելու գործընթացը, Ձեր կողմից այլ հրահանգ չստանալու դեպքում: Ձեր իրավասությունը պարզելու կամ հայտ ներկայացնելու համար` գանգահարեք Սոցիալական Ապահովության անվճար հեռախոսահամարով, կամ այցելեք մեր կայքը` www.socialsecurity.gov/extrahelp հասցեով:

Medicare-ի այլ ծախսերի մասով օգնության տրամադրում`

Եթե Դուք ունեք ցածր եկամուտ և քիչ միջոցներ, հնարավոր է Ձեր նահանգը վճարի Ձեր Medicare-ի ամսավճարները, և որոշ դեպքերում, Ձեր «սեփական գրպանից վճարված» այլ բժշկական ծախսերը, օրինակ ինչպես` ապահովագրական հանումները (deductible) կամ համատեղ ապահովագրությունը (coinsurance):

Միայն Ձեր նահանգը կարող է որոշել` թե արդյո՞ք Դուք իրավասու եք օգնություն ստանալու Medicare-ի ինսայդությունների ծրագրերի (Medicare Savings Programs) շրջանակներում: Դա պարզելու համար, դիմե՛ք Ձեր նահանգային կամ տեղամասային բժշկական օժանդակության (Medicaid) գործակալությանը, սոցիալական ծառայությունների գրասենյակին:

www.socialsecurity.gov



Social Security Administration
SSA Publication No. 05-10035-AM
Retirement Benefits (Armenian)
May 2016

Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: